



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 33

ՃԱՐԱՐԱՐ Թ

14 ԱՊՐԻԼ 1907

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱԽԱՌԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍՈՂՄԱՆԻ
Տարեկան 50 ՂԲԸ	Տարեկան 54 ՂԲԸ	Տարեկան } 42 ՖԲ.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

Զ Ե Ն Ի Թ

Իր ամէն մասանց մէջ կատարելապէս խնամուած միակ ժամացոյցը զոր կարելի ըլլայ յանձնարարել և երաշխաւորել այն բացարձակ ճշտութեան համար՝ որ իր յատկանիշն է :

ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՁ 1900.

ԱՐՏԱՔՈՑ ՄՐՑՄԱՆ ՄԻՂԱՆ 1906,

Հանդերձ Ժիւռիի անդամակցութեամբ.

Թուրքիոյ և բոլանդակ Արեւելքի համար միակ ներկայացուցիչը

Գ. ՍԱՐԳԻՍՕՅ Ե Ի ԸՆԿ

Մեծ մթերանոց ամէն տեսակ ժամացոյցներու, շղթաներու և գոհարեղէններու.

Կ. Պոլիս, Պաղչե-գարու, Օոոզի-Պաֆ (Էօւհր-Էփհէի) վանատասան դիմաց Թիւ 16,


ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(آ. آمدوریان) شرکت صریحه مطبوعه — باب عالی جاده سنده نومرو ۵۵

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաչը-Ալի հասցեայի թիւ 52

Հատոր 40 փարսա



(Ձեռնի, ոտի ու ոտի եւ ձեռնի,
էլիանգամայն մեքենաներ
կը գտնուին)

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅՔԱՅԻՔ ԿԱՅՍ. ՓԱՆՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւորութեամբ,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենանները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐՔԱՆԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | | |
|--------|---|--|
| ԲԵՐԱ | (| 1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (| 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱՆԱԹԱ | (| 1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (| 2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (| 1. Սուլթան համամ . |
| | (| 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՏԱՐ | | Չարչը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիւղեր զաւառներու բոլոր ֆապրիկներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ
343 կրկին, Տիւզօղլուի տունը:




ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 33

ՇԱՐԱԹ

14 ԱՊՐԵԼ 1907



ՅԱԻԷՏ ՈՂԲԱՑԵԱԼ
Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
ՀԻՄՆԱԴԻՐ-ՏՆՕՐԷՆ ՀԱՄԱՆՈՒՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ԽՕՍՔ ԱՌ

ՅԱԻԷՏ ՈՂԲԱՑԵԱԼ ԴԱՍՏԻԱՐԱԿՆ ԻՄ

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Չէ՛, մեծանուն դաստիարակն իմ, չէ . . . Դուն մեռած չես :

Նախախնամութիւնը այնքան անգուր չի՛ կրնար ըլլալ Քեզ հանդեպ, եւ հրեշտակը այն զօրութիւնը չունի որ այնքան սիրուած հոգիդ գայ մենե խել ու քանիլ այլ աշխարհ :

Չեմ կրնար հաւատալ ու միտս իր հունաւոր հորիզոնին վրայ անգործ ե ըմբռնելու սա սեւ գոյժը՝ Պերպերեան մեռած . . . :

Դուն մեր մօտն ես, ո՛վ հաննար աննառելի, Դուն մեր փոլն ես, ո՛վ սերունդներու կրթիչ, Դուն մեր սիրտն ես, ո՛վ մեծայարգ ուսուցչապէս :

Ո՛վ ե այն որ այսօր կարող պիտի ըլլայ սասել մեր արժին կոհակներուն, մեր խռովայոյզ ցաւ-ալիքները ո՛վ պիտի կրնայ հանդարտեցնել եւ ո՛վ պիտի համարձակի միտքարել զմեզ կրկնելով՝ սա բանաձեւը « ՄԻ՛ ԼԱՔ » :

Լա՛լ օրերով, լա՛լ ամիսներով, լա՛լ դարերով, եթէ մեր լացերը ունենան այն կարողութիւնը՝ զՔեզ նորէն մեր գիրկը դարձնելու, ովկիանոսները նեղ պիտի գան, Քու սաներդ համակ արցունք պիտի կտրին, որպէս զի կրկին զՔեզ ունենան իրենց մօտը, իրենց մէջը :

Դո՛ւն, ո՛վ Պերպերեան, Դուն որ բարին ու նեւարիսը փարօղելի մեզ, ահա մենք ալ բարի արժու նեւարապէս կ'ողբանք Քու մեծ կորուստդ, կորուստ մը՝ որ մերը չէ, համայնքինը չէ, այլ տիեզերքինը :

Քու անմահ անունդ Հիւկօներ զնահատեցին, Քու անզուգական կարողութիւններդ ակադեմիներ հաստատեցին, Քու կազմած դպրոցիդ անունով սերունդներ կազմուեցան, վերջապէս Քու յարգելի անունդ *կռակիքէ՛ն* ալ ամուր մնաց գիրի ու գրչի մարդոց արժին մեզ :

Վայրիկ մը եւս, ո՛վ գերյարգելի Վարպէս, պահիկ մը եւս լսե՛՛կ սկար մեկ սանիդ վերջին խօսքերը, որոնք գիտեմ թէ են սկարները պիտի ըլլան՝ ընդհանուր ցաւակցական արտայայտութեանց մեջ :

Ամեն անոնք՝ որոնք Քու դազադդ շրջապատեցին, ամեն անոնք՝ որոնք իրենց անկեղծ արցունքը բերին քանդակի հողակոյտիդ վրայ, եւ ամեն անոնք՝ որոնք «Հայր մեր» մը մրմրեցան շիրմիդ վերեւ, ահա անոնց արժին մեջ ե պատկերդ, հոն փանդակուած ե Քու ազնիւ յեասակդ, ու հոն պիտի մնաս, մինչեւ այն օրը՝ երբ պիտի դադրին զգալի Քու անմոռաց ցաւդ ու սուգդ :

Վեր առ գլուխդ, ո՛վ հաննար անմեկնելի, վեր առ փառապսակ նակատդ, վերցուր այն զոյգ աշխարհներդ՝ որոնց մէջ խնայուցած էիր՝ սերը, հաւատքը, եւ իմաստութիւնը, անոնցմով նայե անգամ մը շուրջդ, տեսիր այն երախտագէտ Ոգին՝ որ կը շրջապատէ դազադդ . զՔեզ սիրողներն են անոնք . զՔեզ պաշտողները, Քեզմով ապրողները :

Հիմա՞ :

Տխուր ե վիճակը, անամոռելի ե ցաւը եւ անմիտքար սուգը :

Միակ ու միմիակ միաբարականք զոր ունիմք կորուստիդ հանդէպ՝ Քու անուշ եւ անմոռաց ՅԻՇԱՏԱԿԻ Է ո՛վ Պերպերեան, Քու տուած կրքութիւնդ, Քու ցոյց տուած կեանքի շաւիղդ՝ մենքորք բոլ ըլլայ զմեզ Քեզի առաջնորդելու, միշտ Քեզի մօտեցնելու :

Իրաւ . . . այս արցունքները վաղը պիտի ցամփին, այս սրագին փղձկումները պիտի դադրին օրէ օր, սակայն Քու պատկերդ մեր աչքերէն եւ Քու անմահ յիշատակդ մեր սրտերէն երբեք եւ երբեք չպիտի անհետանան :

Անգութ հող, դուն որ մեզ կեանք կուտաս, ինչ կեանքներ ալ կը խլես մենք :

Մեզ շատ տեսար Պերպերեան մը . . . ա՛ն, անոր մարմինը կ'առնես, սակայն բուն Պերպերեանը մերիցն է, մեր համայնքին, մեր տիեզերքին :

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ՀԱՆԴԵՍ ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԵԱՆ

Երեքշաբթի, զարնան թարմ ու զուարթ երեւոյթին տեղ՝ ընտելւնն ալ կուլար ու կ'ողբար գողցես Պերպերեան սուգը :

Ս. Խաչ եկեղեցւոյ ջահերը ամբողջ վառուած, անհամար մոմերու բոց լեզուները՝ գմբէթն ի վեր կը բողբոջէին կարծես Պերպերեանի անակնկալ մահուան առթիւ :

Կանուխէն շատ մը հանդիսականներ՝ կին, այր թէ տղայ խոնուած էին Եկեղեցւոյ շուրջը, դադաղին շուրջը, որ կը կենար մէջտեղը մահաբեմին վրայ, ծածկուած շատ մը պատկներով ու ծաղիկներով :

Ժամը ճիշդ Յին Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց մոռելական արարողութեանց, իր շուրջն ունենալով Արքեր եւ Եպիսկոպոսներ, Վարդապետներ, բազմաթիւ Գահանաներ եւ դպիրներ :

Տխուր ու մահաբոյր շարականները կարծես կը բզբռէին ներկաներու սրտերը, ու ամէն ոք իր արցունքը կը բերեր խառնել այս մեծ սուգին, զոր կ'ողբար Պերպերեանի կրտսեր հարազատը Պ. Շահան :

Յաւարտ եկեղեցական արարողութեանց՝ Նորին Սրբազնութիւն, Ամեն. Պատ. Հայրը բեմ ելլալով՝ իրեն երկնածիր կարողութեամբն ու պերճախօսութեամբ ճանչցուց Պերպերեանը մեր համայնքին՝ իր էն արժանի փութերուն մէջ եւ շեշտեց անոր յիշատակին կարեւորութիւնը եւ յորդորեց ժողովուրդը, որպէս զի Պերպերեան վարժարանը եթէ ՄԱԻ՛նը կորսնցուց՝ գէթ պահէ անունը, յօգուտ մեր համայնքին եւ իբր անմոռաց յիշատակ մեծանուն Հանգուցելոյն :

Իամբանականէն վերջ՝ վարժարանին նախկին չրջանաւարտներէն մէկ քանինք իբր վերջին յարգանք իրենց սիրելի Ուսուցչապետին՝ կարդացին դամբանականներ, որոնց մէջ կ'արժեն յիշել Լեւոն Էֆ. Թաշճեանի եւ Թէոդօրիկի գրուածքները, մանաւանդ այս վերջնոյն բանաստեղծական եւ համակ զգացում տողերը, որոնց ունկնդրող բոլոր հանդիսականք յարտօսր փղձկեցան եւ «սպրիտ»ներ կրկնեցին մեկուսի. այնքան բնական, այնքան անուշ եւ յուզիչ էին պէտք է ըսել ո՞նք ու զգացումները այդ դամբանականին :

Դադաղը՝ զոր չըջապատած էին Պերպերեան վարժարանի սանունք՝ ձեռամբարձ առաջնորդեցին բակը, եւ անտի մեծ ու շքեղ թափորով առաջնորդեցին մինչեւ գերեզման նոյն հանդիսաւորութեամբ, ու մարմինը ամփոփուեցաւ իր սիրելի կողակցին եւ զաւկին մօտ :

* * *

Խմբագրութիւնն խորապէս զգածուած այս անմոռաց կորուստին՝ յանձին Պերպերեան էֆէնտիի, իր սրտազին եւ անկեղծ ցաւակցութիւնները կը բերէ խառնել իր Զաւակներուն՝ Ազն. Օր. Մաննիկի, Տիար Օննիկի, Շահանի եւ բոլոր անոնց որոնք կը կրեն այսօր այդ մեծ սուգը :

ԿԱՆԱՑԻ ԴԻՍԱՍՏՈՒԵՐՆԵՐ

Մանթէկացցա՝ իտալացի մեծ իմաստասէրը և անմահ բնախօսը, որ մի եւ նոյն ատեն հիանալի գրող մըն է, թերեւս միակ մարդը եղած է աշխարհիս վրայ որ այժման խորապէս ուսումնասիրած և մանրազնին կերպով քննած ըլլայ գեղեցիկ սեռը:

Մանթէկացցա՝ այնքան հեղինակութիւն ունի կիներու վրայ որքան Բասթօր ... միջոցներուն:

Այս բաղդատութիւնը, գիտեմ, կիներու հաճելի ըլլալու հանգամանքը չունի. բայց միւս կողմէ սպահովապէս պիտի հրճուին միջոցները՝ զորս առաջին անգամ ըլլալով մարդու պէս բանի մը նմանցնելու պիտի յանդգնի մէկը:

Ենթադրելով որ այս յօդուածս և ոչ մէկ կին պիտի կարգայ, շատ չպիտի քաշուիմ ճշմարտութիւն մը մէջտեղ նետելէ, այն է թէ կարծուածին չափ մեծ տարբերութիւն չկայ Մանթէկացցայի գրչին և Բասթօրի մանրադէտին տակ իյնողներուն միջեւ:

Տեսէք ինչպէս.

Աշխարհիս ստեղծմանէն մինչեւ ասկէ քանի մը տարի առաջ ինչ գէշ բան որ պատահէր — «ասոր տակը կին մը ըլլալու է» — կ'ըսէին, մինչդեռ հիմա ինչ բան որ աղէկ չէ՝ անպատճառ մէջը միջոց կայ կը պնդեն: Ուրկէ՝ իրարու քիչ շատ նմանութիւն:

Մանթէկացցայի Կնոջ Բնախօսութիւնը անուն գիրքը հայերէնի թարգմանուած չըլլալուն համար է որ հաճոյք կը պատճառէ ինծի անկէց քանի մը քաղուածներ ընել և ներկայացնել Համբարձիսանի ընթերցողներուն, քանի մը սիրուն էջեր՝ որոնց մէջ այնքան նրբին կերպով դիմագծած է Եւրոպացի քանի մը աղբերու կիները:

ԻՏԱԼՈՒՆԻՆ

Թէեւ թխաթոյր՝ բայց ֆիզիքապէս դեղեցիկ է և շատ աւելի գեղեցիկ կրնայ ըլլալ եթէ իր սեւ աչերուն, ոսկեգոյն մորթին և աղուամազուտ չրթերուն միացնել կրցած է խարտեաչ մազեր ալ:

Մարմնով լեցունիկեկ, ձեւաւոր, հեշտօրէն

փափուկ, իտալուհին սիրամոլ, անուս և համեստ է միանգամայն:

Իր էրկանը նուազ անձնուէր՝ քան եւրոպացի ուրիշ շատ կիներ, որովհետեւ ղինքը կ'ամուսնացնեն դեռ սրիւ չսկսած: Ամուսնութեան մէջ գրեթէ միշտ դժբաղդ, որովհետեւ ամուսնալուծութեան վրայ չի կրնար ապաւինիլ ... մերիններուն պէս: Հիւսիսային Եւրոպացիք շատ կախորժին իտալացի կինէն, քանզի անոր քով կը գտնեն ինչ որ իրենց կիներուն վրայ կը փնտռեն ի զուր:

ՖՐԱՆՍՈՒՆԻՆ

Շնորհալի՝ նոյն իսկ երբ գեղեցիկ չէ: Երիցս կին և երիցս զրգալի:

Իր մարմնոյն կոր ձեւերուն նրբութիւնովը և սքանչելի բերնովը՝ ֆրանսուհին կիներու ամենէն պաշտելին և ամենէն զգլխին է:

Բարոյականին գալով՝ հաճելի, նրբամիտ և անմրցելի կերպով չարածնի:

Էրիկ մարդուն վրայ աւելի ազդեցութիւն ունի քան իտալուհին, որովհետեւ անորմէ աւելի մշակուած միտք մը ունի և անորմէ աւելի համակրելի է և ղիւթիչ:

Մինչեւ իսկ իր լեզուն — առածգական և շողշողուն — կարծես մասնաւորապէս իրմէ խօսուելու համար միայն չլինուած է:

ՍՊԱՆՈՒՆԻՆ

Դերազանցօրէն և փառաւորապէս դեղեցիկ է Սպանուհին:

Փոքր ոտքեր և պտըտիկ թաթիկներ ունի և մեծ աչեր, որոնք մարմարեայ ապարանքի մը բաց պատուհաններուն կը նմանին:

Մարմնը գեղեցիկ կորութիւններ ունի: Մազերը ամբողջ մարմնը կրնան ծածկել և անպէտ դարձնել նրբանիւթ պաթիսթին գործածութիւնը:

Կրօնամոլ, անուս և չափազանցօրէն նախանձ, բծախնդիր ու անհոգ:

Շատ հպարտ — և իրաւունքով — իր արտակարգ գեղեցկութեանը գիտակցութեանէն և վեհօրէն գոռոզ իր այն կարողութեանէն՝ որով կը մեռցնէ կամ մեռցնել կուտայ մարդ մը ... սոսկ ակնարկով մը:

Եւ կը պարծի գիտնալով թէ իր աղւորիկ թաթիկներուն մէջ դրած է Աստուած այն բանալին՝ որ երջանկութեան կամ դժբաղդութեան զուսնեքը կը բանայ:

Գ Ե Ր Մ Ա Ն Ո Ւ Հ Ի Ն

Նուազ շնորհալի է իր շարժուածքներուն ինչպէս նաեւ իր մարդակազմական ձեւերուն մէջ: Բայց շատ հաստատուն կերպով չինուած է ժամանակին և սիրոյ աւերումներուն դէմ տոկալու համար:

Խարտեաչ և շուշանի պէս ճերմակ:

Աւելի երկարատեւ խանդաղատանքի համար ստեղծուած քան թէ յանկարծակի սիրոյ:

Տարփուհի ըլլալէ աւելի ամուսին ըլլալու յարմար:

Պարզամիտ, սքանչելի տանտիկին, աշխատասէր և ուրիշ կիներէ աւելի ուսեալ:

Պատուական մայր, երգը և պարը շատ կը սիրէ:

Վերացական՝ մինչեւ անգամ հաճոյքներու իրականութեան մէջ:

Հոգեպաշտ, խոտախոտ և քմշոտ:

Ա Ն Գ Լ Ո Ւ Հ Ի Ն

Իր խարտեաչ տիպարով ճիշդ հակառակն է սպանիայի կնոջ: Անոր հաւասար և ոչ ստորադաս: Միայն տարբեր կերպով աղւոր է:

Մազերը խարտեաչին ոսկեգոյն և արծաթափայլ երանգներն ունին:

Աչեր երկնագոյն և մորթ մը որուն յղկը՝ նութիւնը՝ Սէվրի յախճապակիները ունին: Հիանալի ակռաներ և թարմութիւն զոր ամբողջ կեանքին մէջ կը պահէ. վերջապէս կատարեալ կինն է անգլուհին: Ասոր հետ մէկտեղ չափէն աւելի խոհեմ բայց ժիր և պարկեշտ գրեթէ միշտ: Գերմանուհոյն Խէս ընտանեւէր և ճամբորդութիւններու համար հոգի տուող:

* * *

Հայուհիները Մանթէկացոյէ ճանչցուելու բազմը չեն ունեցած, ապա թէ ոչ անպատճառ կնոջական այդ սիրուն ալպոմին մէջ զետեղուած պիտի տեսնէին իրենք զիրենք և ամենայն իրաւամբ, քանի որ գեղեցիկ սեռին մէկ փառաւոր ներշնչող իրենք են:

«Սկիզբն իմաստութեան ... toupet ունենալն է» . ահա՛ ինչո՛ւ ես ալ կը յանդըգնեմ, այդ աշխարհածանօթ բնախօսին հետեւելով, թեթեւ գրչով մը ուրուագծել հոս հայուհոյն կիսադէմը:

Հ Ա Յ Ո Ւ Հ Ի Ն

Sursum corda .

Ամբողջ միտ, կրօն, դանդաղ:

Աղւոր աչեր, յամր, սեւ, խոշոր:

Հայուհին այն պատկերն է՝ զոր որքան հեռուէն նայես՝ այնքան աղւոր կը գտնես:

Մազեր՝ ամէն առտու չի կրնալ սանտրելու չափ առատ:

Կոկիկ սիրտ մը՝ ահագին կուրծքի մը ներքեւ:

Պատուական մայր, սքանչելի կին, բայց անհամ տարփուհի:

Ամուսնոյն գրեթէ միշտ հաւատարիմ, և երբ կը դադրի ըլլալէ՝ քիթը բերանը կը դարձունէ ... բայց յուսահատելու չէ:

Սիրուելու կաշխատի և կը խորշի սիրելէ: Սրտով բարի, լեզուով չար և ձեռքով ճարպիկ:

Հրապուրելու արուեստին անտեղեակ, ուրիշներէ կընդօրինակէ և չի յաջողիր:

Քանի մը տարիէ ի վեր կ'սկսի ջիզեր ունենալ: Այդ ալ բան մըն է:

Անգամ մը որ կամուսնանայ, կը դղջայ կարգուած ըլլալուն: Եւրոպացի կիներուն ճիշդ հակառակը:

Գեղեցկութիւն, շնորհ, չեն պակսի իրեն. բայց «չգիտեմ ինչ մը» կայ որմէ զուրկ է:

Տանտիկին, մաքրասէր և բամբասող: Ճամբորդութիւն ընել մտքէն չանցնենք. և ծովէն կը բռնուի:

Երգը և պարը կը սիրէ, երբ ուրիշները կ'երգեն և կը պարեն: Նախանձոտ չէ և որբեւայրի մնալը առաւելութիւն մը չի սեպեր Փրանսուհիներուն նման:

Պալգաք, — եթէ չեմ սխալիր, — սապէս սահմանած է կինը. «Un être qui habille et s'habille»:

Հայուհիները առաջին պարագային մէջ կը յաջողին երբեմն, երկրորդին մէջ հազիւ:

Հայուհին զրկուած է հետեւեալ չորս ձիրքերէն.

Վաղել, հանգրճուիլ, ձի և պիսիքլէթ հեծնել. և flirt:

Սիրոյ պայքարին մէջ տկար և յաջող էրիկ-կնկան կռիւներու մէջ:

Եթէ ներելի ըլլար կիները բայերու հետ բաղդատել, ես պիտի ըսէի.

— Եւրոպացի կինը կրաւորական է, մընացեալները ներգործականը. իսկ խեղճ հայուհին չէզոքը:

Բնականաբար բացառութիւններ կան զորս կը յարգեմ, ինչպէս կը յարգեմ ամէն բան առանց բացառութեան:

Կաւարտեմ իմ քմահաճ հայեացքս, աւելցնելով սակայն թէ՛ հայուհին օժտեալ է ձիրքով մը որ յաճախ չի տեսնուիր այլոց քով, հոգի մը ի բնէ բարի և առաքինի, ինչ որ անշուշտ գեր ի վերոյ է քան զամենայն:

* * *

Մանթէկացցա կնոջական ցուցահանդէսէն սա եզրակացութիւնը հանած է.

«Մարդս իբրեւ մայր և իբրեւ աղջիկ ունենալու է՝ անգլուհին, իբրեւ քոյր՝ գերմանուհին, իբրեւ կին՝ իտալուհին կամ սպանուհին»:

Ներեցէք որ ես ալ աւելցնեմ.

Մարդ իբրեւ զոքանչ ունենալու է՝ հայուհին:

Ես ասիկա փեսաներէն իմացած եմ:

Ծ. ԱԼՓԻԱՐ

ԱՐԵՒԵԼԷ

Օրաթերթ Ազգային, գրական և քաղաքական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան՝ Կ. Պոլսոյ համար 80 դր. գաւառներու համար 108 դր. և օտար երկիրներու համար 35 ֆր.: Հասցէ՝ Ղալաթիա, Բաման-տօ փողոց: ԱՐԵՒԵԼԷ հրապարակ կ'ըլլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

Հանգուցեալ Տօք. ձեյալեան Էֆենտիի այս զուարթ մէկ ժողովին հրատարակելով Հանրագիտակի եջերուն մէջ, կը յուսանք ճանցուցած ըլլալ մեծայարգ մասնագէտ-բժիշկին գրական կարողութիւնը, մանաւանդ երգիծական ու զաւեշտական ճիւղերուն մէջ:

ՊԱՅՄԱՅԱՍՈՒԼԻ

.....

Քիչ մըն ալ պէտք չէ՞ք տեսներ որ զբաղինք այն կարգի բժիշկներով ալ, որոնք թէպէտ գիտութեան մարդ ըլլալու պատրաստուած, սակայն՝ շահու ակնկալութեամբ կամ ապիկարութեամբ՝ չեն վարանիր իրենց գիմողներուն բոլոր նախապաշարունակները, տըգիտութիւնը փայփայելու, անոնց աստիճանին հասնելու, որպէս զի անոնց համարումը վայելեն:

Թէպէտ վկայեալ, սակայն կէլինճիկճիներէն վար չեն մնար անոնք: Տեսնենք իրենց գործելու եղանակը:

Այս անգամ ալ մտնենք սենեակը իյուն-կիանոս աղային, որ քանի մը տարիէ ի վեր աչքերու տեսակ մը հիւանդութենէ վարակուած է: Աքաթանկէլոս աղան ալ քովը կը գտնուի, քանի մը կիներ, և սպասուած բժշկին թէլալներէն Զիւմպիւլ տիկինը: Բժշկը կը մտնէ:

Բժիշկը. — Բարեւ ձեզ, տիկին Զիւմպիւլ, դուն հոս ի՞նչ բան ունիս:

— Աստուծու պարին, հրամանեցէք, քեզի հէմ հաւատիսներ տալու եկայ, հէմ ալ իրիճա ընելու քի մեր իյունկիանոս աղան ալ աղէկցնես. պօյդ սիրեմ, նստէ նայիմ սա քովս:

Բժիշկը. — Իմ աս խտար վարպետ հէքիմ ըլլալս ի՞նչպէս գիտես կոր նայինք:

— Է՛յ նա՛սըլ չը գիտնանք քի քսան տարուան խուլերուն անկաճները բացիր, քի հիմայ Պաղտատի մէջ սիւրբիսինէկները վըզ վըզ ընեն իսէ, անոնք ասկէց կը լսեն կոր. է՛յ նա՛սըլ չը գիտնանք քի հարուրներով կոյրերու աչքերնին հանեցիր, սրբեցիր, մէջի հիւանդ տեղերը հանեցիր, կէնէ տեղերնին տրիր. պազիսին ալ կատուի աչք դրիր քի, հիմայ գիշերները պիլէ կը տեսնան կոր:

Բժիշկը. — Ատոնք պղտիկ բաներ, են, տիկին Զիւմպիւլ, աղէկ գիտես քի խօսքերն ին պիւէ ընել չիմ ուղեր, չիւնքի նէվաղիլի պէս բաներ են ատոնք:

— Մուշու տոքթոր, սա անցած օրուան տիւնէր մայասը ին ալ էյէր երկու օր առաջ տեսած ըլլայիք նէ, մութլախա սիտի աղէկ-ցընէիք, բէք աղէկ գիտեմ:

Բժիշկը. — Ինչ ընեմ, տիկին Զիւմպիւլ, ասը վախթին ինծի կանչէին իսէ, հիմա թուովի պէս եղած էր, զավալլըին վէրէմի իլաճ շատ տուեր են, զօուով վէրէմի դարձուցեր են:

— Մուշու տոքթոր, սա ծանս հասած տեղը քու մէթդ կ'ընեմ կոր, իւլէ վէլաքին քեզի համար ան պիտի պէրէք կ'ըսեմ կոր. տեղին կէօրէ ալ հետեւնին կուի պիւէ կ'ընեմ կոր, գիտցած եղիք:

Բժիշկը. — Ասըլզատէութիւնդ իսպաթ կ'ընես կոր, տիկին Զիւմպիւլ: Հիմա գանք մեր հիւանդին, ո՞ր ատենէ պէրի է քի հիւանդ է. ո՞ր հէքիմները նայեցան. ի՞նչ իւլաճներ թէրթիպ ըրին իսէ, գիտնալս պէտք է:

— Էվէլ էմիրտէ Խունկիւնոս աղախ հիւանդութիւնը հէմէն սուտ չըսեմ ամա, սանկ նանկ քանի մը տարի կայ, էյ եա, օր ըսածդ ի՞նչ պիտի ըլլայ, վըզըր վըզըր կը դառնայ:

Բժիշկը. — Ի՞նչ է սըլընթըն, ի՞նչ կ'ըլլայ կոր:

— Մեր հիւանդին ասըլ տէրտը աչքերն է, սէպէ քի չտեսնարի պէս պան մըն է, պարէ պա՞ն մը ունենար, պատէմ պատէմ աչքեր ունէր, տեսնողը իպրէնմիշ կ'ըլլար. մէնչուր աչքի հէքիմներու տարինք, պիւթիւն ախաներով, ալաթներով մութ օտաւներու մէջ դրին աչքերը նայեցան, ներսէն դրսէն շատ իլաճներ թէրթիպ ըրին ամա, մողքէս հիշ բանի մը ետարս չեղան:

— Մուշու տոքթոր, աճապա մէկալ հէքիմները եաղլը՞ն ճամբայ գացեր են:

— Թեւէն նօհուտ եաղլըսին նասըլ կուգայ:

— Ինծի կուգայ քի սիւլիւկն ալ աղէկ է:

Բժիշկը. — Մէկալ հէքիմներուն ինչո՞ւ ատոնք չհարցուցիք:

— Հարցուցինք, կալրում:

Բժիշկը. — Էյ հարցուցիք նէ ի՞նչ ըսին:

— Հիշ մէկը իզին չտուաւ:

Բժիշկը. — Խալթ ըրեր են. նօհուտ եաղլըսին, սիւլիկը էյէր ըրած ըլլայիք, աս զավալը մարդը շատոնց աղէկցած պիտի ըլլար:

— Էյ հիմա հէմ եաղլը պանանք, հէմ սիւլիւկ դնենք:

Բժիշկը. — Հիմա ա՛լ վախթը անցած է. առաջ ընելու էիք:

Զիւմպիւլ. — Վույ քէօրնայ աչուընին անանկ հէքիմներուն. վար անցնին տէ՛, վեր չեղան. ծառքս անցնէին տէ պզիկ պզիկ ընէի:

Բժիշկը. — (Առանց գործիքի հիւանդին աչքերուն վրայ պարզապէս ակնարկ մը նետելով, որովհետեւ ո՛չ աչքերուն ներքին մասերը քննելու գործիքները ունի և ո՛չ ալ զանոնք գործածելու մասնագիտութիւնը). Մինչեւ ասօր նայով հէքիմները, հիւանդութեան ասըլ քէօքը ասըլ խիւլասան չեն հասկըցեր. ափ աչիքեար պաշխա ճանքու խղ-մէթ ըրեր են. թէրթիպ ըրած իլաճնին ալ վըսասկար բաներ են, նաֆիլէ վախթ խալլալ ըրեր էք:

Զիւմպիւլ. — Աման մուշու տոքթոր, աճապա հիւանդութեան ասըլ քէօքը, ասըլ խիւլասան ի՞նչ է եղեր. մեզի ալ ըսէ, ա-րեւդ սիբեմ:

Բժիշկը. — (Խուրնազուլթեամբ) Էֆէնտիմ, ասիկայ ասըլ ափ աչիքեար պաշ մայասըլի է՞. վարը մայասըլ ունի եղեր, սէպէպով մը կլօխը ելեր է. ամէն հէքիմի հասկնալու բանը չէ. ամէն հէքիմ մայասըլէ չը հասկնար. խայէթ տէրէճէսիդ վարպետ ըլլալու է. հասկըցա՞ք մի հիմայ, եօխսա մի չհասկցաք:

— (Ամէնքը մէկ բերան). Վո՛ւյ պօյդ սիբեմ. աս ի՞նչ աղւոր միւֆտէ էր տուիր մեզի. ամէնու ալ խելքին տանկ ըրաւ, բէք աղէկ հասկցանք, խելքերնիս պառկեցաւ ա-սանկ ըլլալուն. պա՛շ-մա՛-յա՛-սը՛-լի՛:

Զիւմպիւլ. — Տեսա՞ք մի հիմա, հաղար հեղ ըսի քիմ, եաղլում, սա հէքիմները հիւլէթը չեն հասկցեր, բէք վարպետ հէքիմներ չըլլալնին ըսելով ըսելով, պերանս մաղ բուսաւ:

— Տիկին Զիւմպիւլին ըսածին պէս, էյէր հիլլէթին քէօքը հասկցած ըլլային իսէ մութլախ հիւանդնիս կ'աղէկնար:

Զիւմպիւլ. — Էյ հապա, ասը զօռ պանը, իխթիզալը պանը, հիլէթին քէօքը հասկընալն է. հօխսամ իլաճը խօլայ է. չիյտեմ զահէր տէ նոր պիտի սովորիմ: Աստուած ա՛մնական հիլէթին իլաճները ստեղծած է, ասը վարպետութիւնը հիւանդութեան քէօքը բռնելն է, խիւլասան հասկնալու է, էն մենք հէքիմներուն պերնէն լսած եմ աս ըսածս:

(Աքթանկէլուս աղային մէկ դիտողութիւնը). — Հէքիմ էֆէնտուն քէֆշ արած հիւանդութիւնը, ծառայականս ալ տէրէճէ մին թաստիք կու անիմ իսէ տէ, աս հիւանդութիւնը քիւրիւզլիւ մատտէի մը նիւմանելուն հմար, հաթթա չըլլալով, թէքիֆ կու անիմ ուր, մէկալ հէքիմ էֆէնտիններուն նիւման, մեր հէքիմ էֆէնտին ալ, խուսուսի ալաթներով անգամ մին օլսուն աչքերուն մէջ, հիւանդութեան ասը մէրքէղը, միւճիւկովը քննութիւն մի կուստարէ:

Զիւմպիւլ. — Աման դուն ալ խելքդ չի հասնիր ամէն պանին մէջը կը մտնաս, զահէր դուն մուշու տոքթորէն աղէկ գիտես:

— Քա ճանրմ, ըսածին պէս, մէկալ հէքիմները պիւթիւն ալաթներով սահաթ սահաթ նայեցան:

— Էյ հապա, թող ասը հիւանդ տեղը նայի քի հասկնայ:

Բժիշկ. — (Ծանր խուրհաղութեամբ). Թէլաշ ինչո՞ւ կ'ընէք, էֆէնտիմ, մարիֆէթ ալաթսըղ, աշխարղ, դրսէն նայելով հասկընալու է հիլէթը. ան է ասը վարպետութիւնը:

Զիւմպիւլ. — Էյ հապա, ըսածին պէս, մենք հէքիմին վարպետութիւնը նասըլ պիտի պէլլի ըլլայ, ալաթներով, աշխարղով ըլլալէն սօղրա, պապաս ալ կը հասկնայ. լէպ տէմէտէն լէպլէպին հասկնալու է, քուրուկս:

— Տիկին Զիւմպիւլ, իմանկիանոս աղան զաթը մայասըլի պէս պան մը ունէր:

Զիւմպիւլ. — Իշտէ սէպէպով մը կլօխը ելեր է աղ նանէթ մայասըլը. պէսպէլլի ոտքը պաղ ճուրը շատ դրած է:

Բժիշկ. — Տիկին Զիւմպիւլին էֆքեարը ես ալ թաստիք կ'ընեմ, հէքիմէ նիղամ է քի, ոտքերը պաղ, գլուխը տաք ըլլալու է, իլէ մայասըլ ունեցողին համար:

— Ախ իմանկիանոս աղաս, անխտար կ'ընէի քի պաղ քորերուն վրայ մի պորտիր, պաղ կառնես կ'ընէի, մօիկ չըրիր:

Զիւմպիւլ. — Քա Հուսթիկ, զըղըմ, չըլլայ քի քուկին կլօխիդ ցաւն ալ մայասըլի պան ըլլայ, դուն ալ պաղ քորերուն վրայ շատ կը պորտիր, չըլլայ քի քուկին ալ մայասըլիդ վեր ելլայ:

— Իմ զլխուս ցաւը կրակէն պէրի է. վախով եղաւ. պիրտէն պիրէ կրակ կայ ըսին նէ էօտս բրթաւ, վեր ցատկեցի:

Բժիշկ. — Ամէն օր կը ցաւի մի:

— Չէ պաղի պաղի, պիր ֆարզ տող ելլամ նէ, խըրս ելլամ նէ, պանէ մը վախնամ նէ, պաղնիքս ուշադնեմ նէ, կլօխս շատ կախեմ նէ, կէսը կը ցաւի:

Բժիշկ. — Ասոր կ'ըսեն հարբմ պաղ մայասըլի. էքսէրի կրակէն վախցողներուն կը պատահի, մէկ թէրթիպով բիրի բաք կ'ընեմ քեզի, մի վախնար:

— Մէկալ հէքիմները սինիր է ըսին:

Բժիշկ. — Խալթ ըրեր են, սինիր ըլլայ իսէ մինակ սալի օրերը իլէ շաբաթ օրերը կը ցաւի, ուրիշ օր չի ցաւիր, ան ալ սահաթթ թամ ութին կը պաշլայէ, տասնըմէկին կը կտրի:

— Միւշիւ տոքթոր, իմանկիանոս աղային բէյրիզ պիտի տնե՞ս:

Բժիշկ. — Մէկալ հէքիմները բէյրիզ տըրին մի:

— Հրամմեր ես, աճի կծու ուտելիքներս իղին չը տուին, էյ հալովը ես ալ չէի տար կոր:

Բժիշկ. — Խալթ ըրեր են, ասը աճի կծու ուտելու է քի, մայասըլը դուրս գարնէ, աշաֆ բան ալ չիյտեն կոր, իլէ կարմիր պիպէր, շատ տուէք:

— Էնկինարի ալ իղին տուին, մէկալսները:

Բժիշկ. — Մինակ կոթերը կրնայ ուտել, հասկեցաք, պօշ չգտնուիք տիխաթ ըրէք:

— Հաւկիթի ալ իղին տուին մէկալները: Բժիշկ. — Խաշածը չըլլայ քի ուտէ հա՛, ետղին մէջը ըլլայ իսէ, ուզածին չափ թող ուտէ:

— Սիւտի ալ իղին տուին, սիւտածի ալ:

Բժիշկը. — Մինակ հում սիւտ կրնայ խմել. երաժիշտ իդին չունիմ:

— Խըհարի իդին տուին մէկալները:

Բժիշկը. — Մէջի կուտերը մինակ կրնայ ուտել, ան ալ չծամած կլլելու է:

— Մէկալ հէքիմները կանուխկեկ թող պառկի ըսին:

Բժիշկը. — Սախըն հա՛, մինչեւ քի շափախը չնետէ, չըլլայ որ գլուխը բարձին դնէ, պաշ մայասըլի զըթ կուգայ:

— Մէկալ հէքիմները, օրը քանի մը սահաթ պտըտի ըսին:

Բժիշկը. — Սախըն հա. տեղէն պիլէ եւ բերալու չիգար, մայասըլին զըթ կուգայ:

— Մէկալ հէքիմները բաղնիք տարէք ըսին պազի պազի:

Բժիշկը. — Բաղնիք հիշ չըլլար. պաշ մայասըլի զըթ կուգայ. թէճըրիպէն իմ վրաս ըրի:

— Մէկալ հէքիմները ըսին քի ետթախին բարձերը պարսը ըլլան:

Բժիշկը. — Եաղլըշ թէրճիպ, բարձ հիշ չուզեր, գլուխը վար, ոտքերը վե՛ր:

— Պալըխի իդին տուին մէկալները:

Բժիշկը. — Պալըխին գլխուն կողմը մինակ կրնայ ուտել. ան ալ ի՞նչ ետղիով թափաքնելու է. լաքին մուխլախ հետը քէթէն թօխուսի ջրով, պուլղուր բիւսվի գտնուելու է. չէնէ մինակ պալըխը զարար կուտայ, գիտցած եղիք:

Զիւմիւր. — Քա կը նայիք, արեւնիդ սիրեմ, մէկալ հէքիմներուն ըսածին տապանը տապաննա զըթը կ'ըսէ կոր, աս ինչ ետղլըշ պաներ ըրեր էք տէ՛, խապար պիլէ չունիք, զաւալլըներ:

— Բէօրնայ ալուընին. օխա մը էօպիւչիւմիւ պօյ գետնին տակը անցնին քի ալ վեր չելլան պարէ:

Զիւմիւր. — Ինչալլահ իսուկիանոս աղան մեր տոքթորին սայէյէն կ'աղէկնայ տէ, մէկալ հէքիմներուն վրայ իլիմօն կը քամես:

Բժիշկը դեղագիրները գրելէ և գործածութեան կերպը հասկցնելէ վերջը կը մեկնի. ատոնց թարգմանութիւնն է հետեւեալը.

Թաքսիքօմ թառաքսաքօմ, պաճ պիպէր — քարտամօմ, քեաքիւլէ — միրօպալան, քարահալիլէ:

Ո՛ւր ես, Մոլիէր:

ՅՕԲԹ. ՃԷԼԱԼԵԱՆ

ՃԵՐՄԱԿ ԵՐԵՍԸ

Ձմեռը անցաւ, ամառը եկաւ ու Բերա դարձեալ նոր ոգեւորութիւն մը սաացաւ:

Բերայի մէջ ուր կը գտնուին իրարու շատ մօտիկ, պարկեշտն ու անբարոյականը, հարուստն ու աղքատը, գեղեցիկն ու տգեղը, նպարավաճառին հարիւր ոսկի պարտական եղող բարթամն ու անօթի մնալով մասվաճառին վեց զրուշ պարտքը վճարող անանկը, թօգատլեանն ու իշկէմպէճի Սօթիւրին, չիքն ու թափթփածը, Վառիէթէ թատրոնը, էքթալօֆօսի Միս էլէնը, էսսեան վարժարանը, լրագրավաճառ Գէորգ աղան եւն. եւն.: Ինչպէս կը տեսնէք շատ բաներ կը գտնուին Բերայի մէջ, բայց ինչ որ ատենցմէ շատ աւելի կարեւորութիւն ունի մեզի համար ու ամէնէն աչքառուն է, հովկու միւսիւներու այն լէգէոնն է՝ որ առտուընէ մինչեւ իրիկուն գրաւած է ամբողջ Բերայի մայթերը:

Շատ չիք են ատոնք: Իրենց քիթին վրայ կը փալիլի Եիւքսէք-գալտըրըմէն 60 փարայով առնուած տպակիէ ակնոց մը, սեւ պօնժուռ մը՝ որուն գրպանէն կարմիր թաշկիւնակի մը զոյգ մը ականջները կ'երեւան, ճերմակ ծիլէ մը՝ որուն վրայ անպատճառ ոսկի ջուր գարնուած 100նոց շղթայ մը իր ներկայութեամբ կը փայլի, արդուկուած տաբատ մը՝ որուն յետսակողմէն երկու կատուի աչքեր կ'երեւան, ընդհանրապէս, երբ փշոզող հովէն պօնժուռին քղանքները վեր բարձրանան և վերջապէս լուսնին պօթեր մէջը կը ընթոյ՛ք՝ քալած ատեննին հանրութեան ուշադրութիւնը իրենց վրայ կ'եղրունացնելու համար:

Ահա իրենց բոլոր արդուղարդը, քօստիւմ մը, պերճանքը:

Իսկ գրպաննին ... ատ տեղու անքը մի հարցնէք, կ'աղաչեմ, զի ոչ ճանաչեմ եւ գիտցեմ քե ի՞նչ կայ ի մեզ գրպանաց իւրոց...

Եթէ հարցուի իրենց թէ՛ գո՞հ են իրենք իրենցմէ, ապահովաբար «Այո՛» պիտի պատասխանեն, ինչու որ գործ մը չունենալովնին ստիպուած չեն առտուները կանուխ արթննալ, այլ անուշ անուշ կը քնանան և

երբ զիրենք արթնցնեն՝ սաստիկ կը բարկանան, կրակուբոց կը կտրին, կը հայհոյեն եւլն։

Յերեկին իրենց փորը կշտացնելու համար բարեկամէ բարեկամ կը չըլին, ու երբ իրենց այդ գոհացումն ալ կատարուի, հա՛յաէ սըրճարան՝ ուր անկուտիաբար թերթ կը կարդան։ Ննջեցեալի մը, հարսնիքի մը լուրը առին, հոն են անպատճառ. երկուշաբթի օրերը Ս. Յարութիւն եկեղեցին աղջիկները Արեւագալ կ'երգեն, դարձեալ հոն են, հինգշաբթիները Ղալաթիա նոթայով Արեւագալ մտիկ ընելու համար, Չորեքշաբթի օրերը Ս. Երրորդութիւն տիրացու Ռուբէնին գեղգեղանքը մտիկ ընելու համար, վերջապէս չաբթուան ամէն օրը մէյ մէկ տեղ։ Թատրոն կայ, հոն ալ իրենց ներկայութիւնը կը ցըցունեն, հանդէս մը սարքուած է այն ինչ վարժարանը, հոնկէ ալ պակաս չեն. վերջապէս հոն են, հոն, միշտ հոն, հոն, հոն, ամէն տեղ։

Դրպաննէն անպակաս է իրենց մեծ հօրը մեծ հօրմէն մնացած մէծիտ մը և ամէն անգամ որ ծխախոտ եւլն. առնել պէտք ըլլայ, քովերնին գտնուող բարեկամներն ուղղելով իրենց խօսքը։

— Եղբայր, երկու շաբաթ ունիսնէ տուր, վրայինս մէծիտ է, քիչ մը վերջը աւրեմ նէ կուտամ։

Ու ալ սպասեցէք որ ձեր տաքուկ գըրպանէն ելլելով պտոյտի գացող երկուքնոցը վերադառնայ դարձեալ իր բունկալը։

Իբր ընկերական պարտականութիւն՝ գործ մը կ'առաջարկէք, կը գտնէք իրենց և որուն մէջ թերեւս յառաջդիմելով պիտի կարենային ՄԱՐԴ ըլլալ, բայց որու հոգ, առարկութիւն մը ընելով կը մերժեն ու չեն երթար։ Աս քիչ կուտայ կոր, ատոր քապիէքը խիստ է, սա է, նա է, աս ճիճի է, ատ պիճի է, միւսը ըսես մահալլէպիճի է եւլն. եւլն.։ Ինչ կրնաս ըսել, պօժ մարդու պօժ խելք։

Եւ զարմանալին ո՛ւր է, ասանկներուն է որ սիրտ կուտան մեր աղջիկները, անշուշտ անոնց արտաքին կերպարանքն խաբուելով։

Պիտի ըսէք թէ ինչպէս կ'ապրին ասոնք. հայրերնին ողջ ըլլայ, կը կերցնէ, կը խմցնէ, իրենց հոգն է. արդէն մարդու մը համար ինչ բան աւելի անհրաժեշտ քան ուտել,

խմել, քէյֆին նայիլ և պէտք եղած ժամանակ քնանալ։

Փա՛ռք Աստուծոյ, հովուներուն մեծ մասը արդէն այս վայելքները կ'ըմբոշին։

* * *

Եթէ ժամանակ ունիք, նկարագրեմ ատոնցմէ հատ մը։

Չուաճեւ դէմքով, սեւ խոշոր աչքեր ու խոշոր ալ ականջներով, լայն բերանով, կոտրած թափած ականներով բարեկամ մը ունիմ՝ որ կը պատկանի այդ երանելիներու դասակարգին, և որ ուրիշ ու է գործ մը չունենալով օրը տասը անգամ Բերայի մայթերը կը չափէ ու կը չափիւփիւ, մէջէն չկրնալով ելլալ թէ քանի քայլ կ'առնէ օրը։

Այս բարեկամս, անցեալ օր, տեսնալով որ մէկը չէ կրցեր գտնել ցերեկուան ճաշը անոր հետ ձրիաբար ընելու համար, ու միւս կողմէ ալ անօթութեան անողոք ճիրաններուն չկրնալով խօսք հասկցնել, ստիպեալ կ'երթայ ճաշարան մը իր ստամոքսին պահանջները գոհացնելու համար, անշուշտ զրպանը գտնուող մէծիտին ապաւինելով։

Հիմա կուշտ է ու ցնծալով մեկնելու ժամանակն ալ եկած։

Տասը գրպանները իրար կ'անցընէ, բայց զրամ չկայ, « ճանրմ մէծիտիցէ մը պիտի ունենայի, ո՛ւր գնաց, վայ անպիտան » կ'ըսէ ինքնիրեն։ Վարպետ քսակահատ մը կամ մացուկ մը ժիլէին գրպանէն անհետացուցած էր մէծիտը, բարեկամիս բաղմութեան մը մէջ գտնուելէն օգտուելով։

Ինչ ընէ հիմա, ո՛ւրկէ ճարէ, որո՞ւ դիմէ, ինչ խախկութիւն է աս։

Բայց անդին ճաշարանապետը տեսնելով որ կը տատամսի դրամը վճարելու, մէկ կը համբերէ, երկու կը համբերէ, քիչ մը եւս ու ալ ճարահատ քեզկեահին վրայ գտնուող մածունի բեասէն քիթին բերնին կը նետէ խեղճ տղուն՝ ճեր ճերմակ ընելով անոր թէ հա՛գուստները և թէ դէմքը։

Խեղճ բարեկամս այն վայրկեանն որ ճաշարանին դուռնէն դուրս կ'ելլէր այդ վիճակին մէջ, դէմ դիմաց կուգայ երկու բարեկամներու, որոնց ինչ վիճակ է ատ հարցընելուն։

— Նայեցէք ձեզի կը նմանիմ ես, հէմ հաց կերայ, հէմ ալ երես ճերմակ դուրս կ'ելլեմ կոր, կը պատասխանէ անամթաբար։
Համմէ՞ . . .

Բերայ

ՍԵՊՈՒՀ Մ. ԱԿՈՒՆԻ

ՔՐՈՆԻԿ

ԿԻՐԱԿԻ ՔՕՆԱԿՈՐ

Կիրակի օրերը պատուհանին հետեւէն նը-
շանածին ծեփծեփուն գալուստին սպասող
ուհիները դարձան ամէն անոնք, որոնք Հի-
ւանդանոցին տարեկան նուագահանդէսը եթէ
ոչ չորս ոտքով՝ գէթ չորս աչքով դիմաւո-
րել կ'երազէին Միչինքէն ի վեր:

Ամէնուն խելքը Բրքի-Շանն էր ու միտ-
քերնին նուագահանդէսը:

Այն բոլոր օրերը որոնք Քառքան-
քիէի երկրորդ տետրակին եթիւններովը կը
զբաղէին, պոչաւոր (à queue) դաշնակին
ուրուականը կ'երազէին ու անով կանցընէին
քնոյ ժամերը (եթէ երբեք չարածծի մլուկ մը
իր սուր և անտեղի խածուածքովը չի խան-
գարէր այդ սիրատեսիլ պատկերը):

Մայրեր, իրենց հոգեհատորուհիներուն
Ձատկի առթիւ հազար դժուարութիւններով
կռնակը անցուցած նորակերտ քօսթիւմին ա-
պաւինելով՝ անոնք ալ իրենց կարգին ամ-
սական հինգ ոսկինոց ամուսնացու երիտա-
սարդի մը հաւնեցնել կ'երազէին, միշտ նուա-
գահանդէսին օրը, այդ առթիւ միայն:

Կարգ մը երիտասարդներ, հարիւրին ութ-
սուն գրագիր, օրեր առաջ, իրենց բաթո-
նին դէմ սուսա կենալով՝ պաղատագին կը
խնդրէին, որպէս զի փոխան մէկ ոսկիի՝
պիւռօին վրայ դրուած մտից տոմար իրենց
վիճակէր, որպէս զի կարող ըլլային իրենց
քոյրը, հալային, թէյզէին աղջիկը թեւերնին
զարկած վայելել ու վայելցնել նուագահան-
դէսը:

Վերջապէս անհամբեր շարժում մը կար,
նուագահանդէսը վայելելու ջերմ փափաք մը
սրտերը կը յուզեր մինչեւ այն օրը, երբ օրա-
թերթեր ծանուցին անոր տեղի ունենալիքը:

* * *

Շաբաթ իրինկուն անոնք՝ որ ֆօնսեռնի
պիտի ըլլային Կիրակի, անակնկալ ցուրտին
և ամպամած օդին առթիւ անանկ դէմք մը
չինեցին (չի տեսայ բայց գիտեմ) որուն նը-
մանը պիպիները անգամ չեն ընեք, երբ բաղ-
նիքին մէջ՝ աչքերնուն սապոնի փրփուրը

զգան: Ամէնուն աչքը երկինքն ի վեր, ու
մանք պատուհանէն, շատեր փողոցին գըռ-
նէն վեր կը նայէին դէպի գորշ երկնակամա-
րը, չեմ գիտեր թէ աղօթքի՞ թէ անէծքի
մոլտուքներով:

Եւ քանինե՞ր ասանկ ...:

— Պիտի ըլլայ ...

— Չպիտի ըլլայ ...

— Օգը պիտի բացուի ...

— Օգը չպիտի բացուի ...

— Գալ կիրակիի պիտի ձգեն ...

— Չէ չեն ձգեն ...

— Ի՛նչ ալ ըլլայ նէ պիտի երթանք ...

— Սա հովանոցս նայէ ... կրնամ երթալ ...

— Քէռթէնքէլէ ալ տեղայ պիտի եր-
թամ ...

— Սատկիմ նէ երթամ պիտի ... մէյ մը
սիրտս հոբ ըրաւ ...:

Ահա ամբողջ խօսակցութիւնը որ անցա-
ւաբաթ գիշեր ֆօնսեռնիներու տուները, մինչ
լալկան օդը կը յուզեր սրտերը, և կը ցնցեր
այն օրերը և միւսիւնները, որոնցմէ ա-
ռաջինները ձեռնոց, իսկ վերջինները մէկ մէկ
փողկապ գնած էին այդ օրին համար, ֆօն-
սեռնի սիրոյն:

* * *

Ձիրենք գոնէ գիշեր մը չարչրող նախախ-
նամութիւնը սակայն չուշացաւ իր պայծառ
արեւը բարձրացնել կիրակիի օրրանէն, ու
րուն բեկ բեկ ճառագայթները թափանձելով
արցունքով պառկած ֆօնսեռնիներու սենեկէն
ներս, բոլորն ալ ժպտեցուց և մոռցնել տուաւ
իրենց յոյզն ու սրտադողը:

Կիրակի առաւօտեան պայծառ արեւը ու-
րիշ բան չէր, եթէ ոչ, հիւանդանոցին հա-
րիւրաւոր պատսպարեալներու մաղթանքն ու
չնորհակալիքը առ առատաձեռն բարերարս,
որոնց նուէրներով կ'ամօքուին իրենց ցաւերը,
պահ մը կը մոռնան իրենց տխուր վիճակը և
կատանան ի ձեռն Պատ. Հոգաբարձութեան՝
այն բոլոր անհրաժեշտ պէտքերն ու խնամքը,
որոնց կը կարօտին այդ տան մէջ:

Մինչ ասդին՝ Կիւլիւկներու աղջիկները,
կը խայտան օրինակի համար այդ պայծառ
արեւին ի տես, քանի որ ֆօնսեռնի վայելելու
յոյսը կը ներշնչէ իրենց ... անկուտի (ուրի-
շին տոմսակովը անշուշտ):

* * *

Ինչպէս ամէն տարի՝ նոյնպէս և այս տարի, հակառակ Կարգադիր Մասնախմբին անխոնջ աշխատութեան և աշխուրջ հսկողութեան, անխուսափելի օրէն տեղի ունեցած այն լրոնիկ անտեղութիւններն՝ որոնք չըլլալիք չունին:

1. — Դեռ թատրոնին կառսօնները աթոռներու փոշիները չառած, acte de présence ընել մուտքի դրան առջեւ, « առաջ անցնինք », « տեղ պէճէրուինք »-ի հայու կնկան սովորոյթով, բան մը՝ որ վարժուած են ընել եկեղեցիներու մէջ եւս:

2. — Մէկ տոմսակ մը բռնած, բէշ քաշել, մօր, հօր, հալայի, թէյզէի, թոռան, խնամիի, մինչեւ իսկ սիւսմիւ Եօսկիին կընկանը Քալեօքիցարին օր ցուցնելու համար եռմախ մը կնկան, որուն ամբողջութեան տասներկու ակտոր չի կրնար բաւել ... նոյն իսկ եթէ կէս հակափոր ալ նստին:

3. — Հիւրամեծարներու առաջնորդութեամբ ցուցուած տեղերու չի հաւնիլ, խծբծել, « ա՛ն ինչու հոտ էք տոտոռոցուցէր, մեղա՛յ ... իմ էրիկս ալ օսկի մը տուեր է ... վերի արտին ցորէնը չէ՛ր ես ... »: Եւ կամ, « խլավուզի պէտք չունիմ, իսկէրմի մը պըռնելու չե՛մ մի, չօգ չէ՛յ ... պէլքի իշ պիթիւրիմի համար տաւոր մօտը նստիլ կուզեմ կո՛ր ... »:

4. — Պզտիկներու ժամ ընդ մէջ պէտք ունենալնուն առթիւ նուագահանդէսին էն նուրբ վայրկենին, ճգալով ճգճալով, փութկոտ մայրերու ժողովուրդը անհանգիստ ընելը, նեղ և սեղմ ակտներու մէջէն ճամբայ բանալնին aller-retourի հաշուով:

5. — Նուագը սկսած ատեն մեր հայու կընիկներու անվերջ մուտուքը, անոր ասոր թուալէթին առթիւ տեղի ունեցած խծբծանքները, կատարուած նշանաւորներու լըրատուութիւնը, բարձրաձայն խօսակցութեամբ, որոնց եռաձայն երգեցողութենէն որչափ խառնիճաղանջ ըլլալը ներկայ դառնողները կը հաստատեն անշուշտ:

Եւ դեռ կարգ մը անուղղելի և անտանելի արարքներ, որոնք ամէնքը միաձոյլ պա

համողումը կուտան թէ, մենք դեռ չենք ըմբռնած ճեսիբիմ ըսուածը, կարգապահութիւնը և ասոնց հոմանիշ այն բոլոր էական պայմանները, զորս անհրաժեշտօրէն կը բընտռուի նուագահանդէսի պէս լուրջ ցերեկոյթներու առթիւ:

* * *

Արդարացնելու համար f.n.օնիֆկոնի պաշտօնս, պէտք է ըսեմ թէ՛ ինչպէս ամէն տարի կը պատահի, ծափահարել clou մը այս ֆօնսէնին մէջ, այս տարի նոյն բանը Տիկին Լըքօրնէք-Մաքլէրի վիճակեցաւ: Դեղեցիկ իր ֆիզիքականին մէջ, գեղեցիկ իր հառքիսքի համբաւին մէջ, գեղեցիկ իր շնորհալիութեան մէջ, ահա ամբողջութիւնը հիանալի Տիկնոյ, որ իր քնարին թէլերով եկաւ թրթռացնել մեր սրտին թէլերը:

Հիյացման մեծ բաժին մ'ալ Սինանեան եղբայրներուն, որոնք իրենց ջութակով, թաւ ջութակով և դաշնակով եկան անգամ մ'ալ խել մեր ծափերը, իբր վարպետ, բառին կուռ նշանակութեամբը:

ԲԱՅՑ ...

Ներեցէք որ դիտողութիւն մը ընեմ հոս, դիտողութիւն մը՝ որ եթէ Փռաք հազած ու կանթեր դրած ըլլայի, նոյն կիրակին բէմէն պիտի համարձակէի ընել, բայց աւագ որ այդ տարազը չունէի: Ինչո՞ւ արդեօք, զուտ մտքինսէն չընտրուիր և չի պատրաստուիր բըռօկումը և անպատճառ եւրոպացին կուգայ փայլիլ ու խել մեր ծափերը: Արդեօք չունի՞նք մենք ալ համահաւասար կարողութեան տէր արուեստագէտներ, որոնք օտարներու չափ կարողութիւն ունին զմեզ գոհացնելու, մենք որ ֆօնսէն վարուաւէն տիբլօմէներ չենք bien entendu !

Ինչ եւ է, տարին անգամ մը այս խօսքերը կը կրկնուին թերթերու մէջ, իբր պարտիք պարանոցին մեղ քրոնիկագիրներուս, և կրկին պիտի տեսնէք որ յաջորդ տարին կրկին Հէկէն է որ պիտի փայլի, և Օր. կամ Տիկին Շըմպուօֆ մըն է որ պիտի ղիւթէ զմեզ, ու մեր ակնարկած եեռլի արուեստագէտները ակտներու վրայ պիտի մնան գուլագ միսաֆիւրներու պէս:

* * *

Սակայն և այնպէս pour mot de la fin, ուրախ ենք յայտարարելու թէ՛ Պատ. Հոգաբարձութիւնը տարուէ տարի կը փափաքի կատարելութեան մօտեցնել այս գեղեցիկ ցերեկոյթը, բոսկոլամի ճոխութեան և ներքին կազմակերպութեան կրկնակ աշխատութիւններով և ջանքերով, սակայն մենք որ կը վազենք ներկայ գտնուիլ ու ծափահարել իրենց այդ անխնայ ջանքերը, դու Ֆիլիթը՝ զուռնա կը հասկնանք, ջութակը՝ ծմալոբը, և ընդհանուր սրահը՝ թատրոնը ըսել կուզեմ ... կանանց բաղնիք:

Որուն նկարագրականը ընելու համար բուն իր գոյներուն մէջ, Լիլա մը ըլլալու է մարդ:

ՄԱՍԻՔԷ

ԿԱՅԺԱԿ Կ'ԻՋՆԷ

[ՖԱՆՔԷՋԻ]

— Կայծակ կ'իջնէ իմ գլխուն ... քու գլխուդ ... և շատերու գլխուն:

— Նոյնպէս վերջերս հրատարակուած Սրաքիսքիֆէ մը կը հասկցուի թէ բուն էյֆելի գլխուն, տարեկան 5364 հատ կայծակ կ'իջնէ:

— Կայծակ կ'իջնէ այն « Զվռինկ » (իմ բառգրքէս) միւսիւն գլխուն երբ արանսը սայդակ մը կուտէ իր « պաշտած հուրի » ին ախպարմ եղբորմէն՝ « հոգիս գէթ համբոյր մը » « յանկերգ » ը արտասանած միջոցին ...:

— Կայծակ կ'իջնէ այն Սկիւտարցիի՝ գըլխուն որ՝ կիւրակէ օր քուք անցիմանցե Սըըլէնտիս գեղուհիի մը դէմ նստած միջոցին իսկ՝ ժիլէին գրպանը գնտասեղով բռնել տուած շղթան չաթ ... կընէ և գետին կիյնայ ...:

— Կայծակ կ'իջնէ այն պանախսըզ դըպրոցականին գլխուն՝ որ իր եթերային խոհերուն աւելի փայլ մը տալու համար՝ վարժարանին բուրումնաւէտ կարտ-րօպը (Ն. 100) սիկառի թանձր մուխով լեցուցած բոպէին՝ հսկողը գաւազան ի ձեռին վրայ կը հասնի:

— Կայծակ կ'իջնէ այն նաղելի Օրփիս գլխուն՝ երբ սա երեկոյթի մը ատեն անկիւն

մը քաշուած՝ ինքզինքը ամէն ակնարկէ զերծ կարծելով՝ թօմպուլիկ մատիկները քթին տարած պահուն՝ Պրն. մը մօտենալով ըսէ « Օրիորդ արդեօք հնազիտական պեղումներ կը կատարէք »:

— Կայծակ կ'իջնէ այն նազենիմ տիկնոջ գլխուն, որ երեկոյին ամուսնոյն շուկայէն վերադարձին՝ կատարեալ չփացածութեամբ « ախ հոգիս, ինչո՞ւ այսչափ ուշ մնացիր, գիտես թէ որքան կը սիրեմ զքեզ, և թէ ... » ըսած ատեն, իր փոքրիկ տղան անդիէն միամտութեամբ « մամա, այսօր միւսիւ Սըմբատին ալ ատանկ կէսէիր կոր, ինծի ալ կը սիրե՞ս դպրոցէն ուշ գալու ըլլամ նէ » պատասխանէ անձան քեռուիպը:

— Կայծակ կ'իջնէ այն պիզ պըյըլս միւսիւն գլխուն, որ կերակի օր իր ծըմբին խրդ ընելու համար՝ կառքով պոյոյտի ելած ըլլալով, զարմանալի զուգադիպութեամբ, ճիշդ իր պաշտելիին դռան առջեւ հասած միջոցին, կայծակ, բաքաքուտ կառքին առիւր կը կոտորի ... մինչ հեռուէն խումբ մը կալվուօսներ կը պոռան « եէլքէն աչ միւսիւ »:

— Կայծակ կ'իջնէ այն ինքզինքին կալանքորի հովեր տուող Օրիորդին գլխուն, երբ գաւթիլի՝ մուլիեք լէ քամ ֆիկիւռիմ մէջ՝ պարոն մը անուշադրութեամբ կը կոխէ օրիորդին ա քեօ ժիւքին ծայրը, և ճըռռռթ, բացուածք մը՝ որ երեւան կը հանէ խեղճ մասմաղէլին միւլթիֆօլօր եամալը միտոն:

ՄԻՕԶՕԹԻՍ

ՄԵՐ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒՆ

Իբր երախտագէտ յարգանք՝ յաւէտ ողբացեալ Ռ. Յ. Պէրպէրեանի, այս շաբթու ԼիլԱ չերեւիր իբր զաւեշտագիր, յարգելով իր մեծ ուսուցչապետին սուգը: Իսկ Ազն. Թովմաս էֆէնտի թէրզեանի լուսանկարը և և խմբագրական կենսագրութիւնը յաջորդ թիւով:

ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ ՆԱԵԻ

ԼԻԼԱ ԵՒ ՈՒՐԻՇՆԵՐ

Ս Ի Կ Ա Ռ Ը

ԱՆՋՈՒԳԱԿԱՆ ԱՔԱՊԻՆ

Պ. ՎԱՌԵԱԿԵԱՆ՝ (25 տարու) կայցելէ Այրի Տիկին Մանեակեանի :

ՏԿՆ. ՄԱՆԵԱԿԵԱՆ՝ (27 տարու) կ'ընդունի Պ. Վառեակեանը . քանի որ Տիգրան աղան՝ իր երկրորդ — սակայն անվաւեր... — ամուսինը , այն իրիկուն չափի գար :

ՏԻԳՐԱՆ ԱՂԱ՝ (45 տարու) սովորութիւն ունի , շաբաթը երեք գիշեր մինակ , Տիկին Մանեակեանի ֆով անցնել . որովհետեւ օրինաւորապէս ալ ամուսնացած է ... :

Պ. Վառեակեան . — (Սենեակէն ներս կը մտնէ . ետեւէն ալ Տիկին Մանեակեանը) Ի՞նչ բարեբախտութիւն տրկի՛ն , որ այս վայրկեանիս հոս կը գտնուիմ (Տիկինին մօտենալով) աղէ՛կ միտքս ինկաւ , լուսանկարս ղրկեր էի , ստացա՛ր .

Տկն. Մանեակեան . — Ա՛հ ատ լուսանկարը . քիչ մնաց որ դժբախտութեանս պատճառ պիտի ըլլար ...

Պ. Վառ. — Ինչո՞ւ ...

Տկն. Ման. — Լուսանկարի ալպոմիս մէջ դրեր էի ...

Պ. Վառ. — (Կը խոնարհի) շատ աղնիւ էք տրկին ...

Տկն. Ման. — ... Որպէս զի աչքերուս առջեւէն անդին չերթաք ...

Պ. Վառ. — (Նորէն կը խոնարհի) Բառ մը չեմ գտնար կոր Տիկին , շնորհակալութիւնս յայտնելու համար ...

Տկն. Ման. — Սակա՛յն , մեր Տիգրան աղան ...

Պ. Վառ. — Անխուսափելի՛ն ...

Տկն. Ման. — ... Ինչպէս եղեր է ալպոմը բացեր է եւ ...

Պ. Վառ. — Եւ ետքը՝ ...

Տկն. Ման. — Նստեցէք որ ըսեմ (Պ. Վառեակեան կը նստի եւ կսկսի սիկառ մը ծխել) ետքը տեսայ որ Տիգրան աղաի մազերը ցրցուեցան , աչքերը խոշորցան , ձեռքը ճակտին տարաւ եւ աչքերը վրաս յարելով «աս ո՞վ է» ըսաւ ...

Պ. Վառ. — Ըսի՛ք որ մօրաքրոջս աղան է , ինչպէս առաջուց ձեզի գրած էի...

Տկն. Ման. — Այո՛ , ըսի՛ , սակայն ...

Պ. Վառ. — Սակա՛յն ...

Տկն. Ման. — Սակա՛յն « ես աս լուսանկարը ով ըլլալը կը ճանչնամ . եւ աղէ՛կ կը ճանչնամ , սրիկայի՛ն մէկն է ըսաւ » կը ներէք , սակայն , պարոն Վառեակեան ...

Պ. Վառ. — Բան մը չէ ... բան մը չէ ... ետքը ... ետքը ...

Տկն. Ման. — Եւ քաջեց հանեց լուսանկարը եւ բզիկ բզիկ ըրաւ ...

Պ. Վառ. — (Տեղէն կը ցատկէ) Ո՛հ ... Ի՛նչ ... պատուեց ... ո՛հ ... (այս միջոցին փողոցին դուռը կը հնչուի . Տկն. Մանեակեան դէպի պատուհանը կերթայ վար կը նայի ու ձեռքերը իրար միացուցած ասդին կուգայ) :

Տկն. Ման. — Տիգրան ... աղան ...

Պ. Վառ. — Տիգրան աղան ... հապա վարը ըսիք որ չպիտի գար այս իրիկուն , հիմա՞յ... (սիկառը ֆովը դրուած մոխրամանին մէջ կը դնէ եւ ոտքի կելլայ շուարած) հիմա՛ ... (դրանը զանգակը երկրորդ անգամ կը հնչուի) :

Տկն. Ման. — Բայց ժամանակ մի կորստնցնէք ...

Պ. Վառ. — (Շուարած ասդին անդին կերթայ) Սակա՛յն ...

Տկն. Ման. — (Կառքուային կը մօտենայ եւ դուռը կը բանայ) Հոս մտէ՛ք եւ շուտ (Պ. Վառեակեան կը վազէ , կառքուային մէջ կը մտնէ , դուռը կը փակէ եւ ներսէն կը բռնէ . Տիկինը կերթայ փողոցին դուռը բանալու) :

Տիգրան աղա — (Տիկին Մանեակեանի հետ սենեակ կուգայ) Ինչո՞ւ ուշ բացիր դուռը ...

Տկն. Ման. — Դիչ մը քնացեր էի տէ...

Տիգրան աղա — (Կերթայ եւ Վառեակեանի ելած տեղը կը նստի եւ աչքերը կը հանդիպին մոխրամանին եւ կը տեսնէ սիկառը) Ա՛ս ի՛նչ է , ո՞վ խմեց այս սիկառը ...

Տկն. Ման. — (Շփոթելով) Ո՛վ խմեց... բայց ...

Տիգր. աղա — (Բարկացած ոտքի կելլայ) Բայց ո՞վ խմեց ...

Տկն. Ման. — Բիշ մը առաջ Թէֆարիկ տուտունն եկաւ տէ, հիմակ զնայ ... ան խմեց ...

Տիգր. աղա — Վա՛յ, բաւ է Թէֆարիկ տուտունները սկսան պատրաստ սիկառ ծխել հէ՛ ... (կը վազէ սիկիցին վրայ եւ քեւեկն բռնելով) սակա՛յն, հոս մէկը կայ ...

Տկն. Ման. — Ինչեր կըսես, ո՞վ ըսաւ որ հոս մէկը կայ ...

Տիգր. աղա — Ով ըսաւ մի՛ ... ահա սիկառը ... սիկառը ...

Տկն. Ման. — Թէֆարիկ տուտո՛ւն ...

Տիգր. աղա — Չե՛մ հասկնար ... ան-կարելի բան է որ Թէֆարիկ տուտու մը պատրաստ սիկառ ծխէ՛ ... հասկցայ, ամէն բան հասկցայ, արդէն դռանը ուշ բացուե-լէն կասկածեցայ ... այո՛, աս տունին մէջը մէկը պահած ես, առջիս ինկիր և ...

Տկն. Ման. — Ի՛նչ նախանձոտ մարդ ես ...

Տիգր. աղա — Նախանձո՛տ ... հիմակ դուն առջիս ինկիր ... ցուցուր ուր պահած ըլլալդ ... քալէ՛ (սիկիցին քեւեկն բռնելով սեմեակէն դուրս կը հանէ) :

Պ. Վառեակեան. — (Կառսրոսպին դու-ռը կէս մը բանալով՝ գլուխը դուրս կը հա-նէ) մարդ չիկայ (դողդղալով եւ կամաց մը դուրս կելլայ կառսրոսպէն) փախելու ճար մը (պատուհանին կը մօտեցայ) պատուհաններն ալ ցած չեն որ, վար ցատկեմ (սիկառին կը նայի) ա՛խ անիծեալ սիկառ ... որ քեզի հող մոռցայ ... (մինչեւ սեմեակին դուռը կը յառաջանայ եւ դուրսը մտիկ կընէ) ահա վեր կելլեն կոր, զիս կը փնտռէ կոր, առի-թէն օգուտ քաղենք (ոտին ծայրերը կոխե-լով՝ դուրս կելլայ սեմեակէն) :

(Հիցց վայրկեան կանցցի)

Տիգր. աղա — (Սեմեակ կը մտնէ եւ ինք-նիրեն) Հոս ալ նայինք թերեւս հոս է ...

Տկն. Ման. — (Սեմեակ կը մտնէ եւ կառ-սրոսպին բաց դուռը աչիքն կը զարնէ) Ո՛հ ...

Տիգր. աղա — (Կառսրոսպին դուռը բաց տեսնելով) Աս ի՛նչ է, քիչ մը առաջ դոց էր, և դիտաւորութիւն ունէի մէջը նայե-լու, հիմակ բա՛ւ ա՛յցցց ... աս ինչ է տի-կի՛ն ...

Տկն. Ման. — (Շփոքած) Կերեւայ թէ

ինքնիրենը բացուեր է ... քանի որ նիզը կտարած է ...

Տիգր. աղա — Ինքնիրենը՛ ... ինքնի-րենը՛ ... կըլլայ մի՛ ... կըլլայ մի՛ ... (ակուաները կնքացնելով) ա՛խ փախուցինք... փախուցինք ... սիկառը գիտէի որ Թէֆա-րիկ տուտուն խմած չէր ... (դռանը զան-գակը ուժգին կը հնչուի, Տիգրան աղան կերբայ եւ պատուհանէն վար կը նայի) :

Տիգր. աղա. — (Ասդին գալով) Հա՛, դուռը զնայ բաց, Թէֆարիկ տուտուն է ...

Տկն. Ման. — (Ինքնիրեն) Թէֆարիկ տու-տո՛ւն ... աղէկ ... ես կը կարդացնեմ հի-մայ Թէֆարիկ տուտուն, և ամէն սխալ կը դարմանուի ,. (սեմեակէն դուրս կելլայ և դուռը բանալու կերթայ) :

Վ. ԳԵՐԸԳՃԵԱՆ

ՀԱՄՈՎ ՀՈՏՈՎ Է.

ՉՈՒՏՈՂԸ Ո՞Վ Է...

Ձատիկը կուգայ կոր, ի՛նչ կը խորհինք, մէյ մը հագուստնիս, մէյ մ'ալ կարմիր հաւ-կիթը։ Բայց ասոնց չափ կարեւոր և ասոնց չափ յարգի՝ ԶԱՏԿՈՒՍՆ ԶԷՕՐԷԿԸ կայ ասդին։

Զէօրէկը. ի՛նչ ալ աղւոր կ'ուտուի, եթէ լաւ պատրաստուած է, եթէ եղը ալիւրը և եփուած քը մաքուր, աղնիւ և վարպետի ձեռքով եղած ըլլան։

Այդ վարպետութիւնը ահա պէտք է փնտռել համբաւաւոր անուշավաճառ Մա-նուկ աղա էթմէքճեանի քով, որ, ինչպէս ամէն տարիներ, նոյնպէս այս տարի՝ Ս. Ձատիկի առթիւ պատրաստած է հիանալի հա-մով և հիանալի հոտով պատուական թարմ չէօրէքներ, իր պատուարժան յաճախորդնե-րուն համար։

ՀԱՍՑԷ. — Դուժ-գարու, կայարանին դիմացը։



ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՍԿԻՏԱՐ. — Յաւէտ ողբացեալ Պէրպէրեան էֆէնտի յուղարկաւորութեան՝ եկեղեցւոյ վերնատունը խռնուած կանացի բազմութեան մէջ նորածին մ'ալ բերած էին կըսուի, որպէս զի երբ մեծնայ ու տարիքը հարցուի, ըսեն «Պէրպէրեանին մեռելին օրը խռնտախ ըրի տէ ժամ տարի . . . » :

ԲԵՐԱ. — Կըսուի թէ Հիւանդանոցին ի նպաստ քօնսէռին փայլը կրկինը պիտի ըլլար . . . եթէ օգը նպաստաւոր ըլլար, ոչ թէ բազմութեան համար, այլ կանանց նոր շինած ամառնային քուայիքներուն շնորհիւ, զորս չի կրցան վայելցնել օգին ցրտութեան պատճառաւ :

ՆՈՅՆ. — Նոյն օրը կարեւոր թաղի մը զոյգ նշանածներն ալ ըստ սովորականին երբ յաւարտ քօնսէռին Սըլանտիտ գացին, փոխան մէկ մէկ բաստայի մէկ երկու սիրալիր խօսքեր փոխանակելու համար, խեղճ փափայիկին քսակը գողցուած ըլլալուն, օրիորդին ռսըռիտեայի խապուխտ շինուած մինինիկ քօթմօնին ժամու փարայէն հատուցին երկուքնոցը . . . : (Ըստ մեզ՝ այդ երկու զրուշը պէտք է դրամօթիտէն տեփալիք ընել . Ծ. Խ.) :

ՍԱՄԱԹԻԱ. — Տեղւոյս երաժշտապետին հանդէպ փորի ցաւ ունեցողն. բուն կը յանձնարարենք երկու թէրթիպ սեթիւ, եթէ այս դեղը օգուտ մը չունենայ, կը խոստանանք բիրիբաբ ընել զիրենք՝ . . . մասաժով :

ՊՐՈՒՍԱ. — Մնակեան խումբը կուշտ ու կուռ վայելելէ վերջ՝ ճամբայ հա-

նեցինք դէպի Պօլիս : Երբ զիրենք մօտէն տեսնելու պատահութիւնը ունենաք, մեծ փոփոխութիւն մը պիտի նշմարէք անոնց ամէն մէկուն վրայ : Անոնցմէ ամէն մէկը տասնական քաշ աւելի միս կապած են . . . տեղւոյս միսին քաշը 6 զրուշի ըլլալուն :

ԴԱՏԸ-ԳԻԻՂ. — Նորակազմ Թաղ. Խորհուրդէն կը խնդրուի բացարձակապէս արգելել չիք միւսիւններուն, բակը կենալով անցնող դարձող օրիորդները ու տիկիները դիտելնին : Կը յուսանք թէ այս կարգադրութիւնը մինչեւ Զատիկ տեղի կ'ունենայ :

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ՊՐՈՒՍԱ. — Ուսումն. Ընկ. — Ըստ Ձեր փափաքին՝ Թերթերը սկսանք զրկել Ապրիլ 1էն, հաճեցէք տարեկան բաժնեգինը կէս Օսմ. ոսկի, ուղղակի Տնօրէնութեանս հասցէին զրկել մանտաքօստով :

ԷՐԶՐՈՒՄ. — Վ. Տ. էֆ. — Հաճեցէք պայմանաժամը վերսկսած բաժանորդներու՝ որոնց ցանկը ունիք ձեր մօտ, դրամները ընդ փոյթ մեզ հասցնել :

ՊԱՂՏԱՏ. — Ձեր պայմանաժամը վերսկսած է արդէն, հաճեցէք դրամը զրկել :

ԷՏԻՐՆԷ. — Գործակալութիւն. — Բաժնեգինները գանձելով՝ հաճեցէք մեզ հասցնել :

Դրամի մասին նոյն հրաւերը մեր այն բաժանորդներուն՝ որոնց պայմանաժամը վերսկսած է :

Արսօնսկր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի Գաւաթի քիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՈՅՐԱՆԵՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Հարստ, Թօփաշեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկունութեամբ եւ գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գինով, յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բոլորիներու
եւ տղայոց շիք եւ գինացկուն փոքրիկ
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ է:

Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին: 50—31



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՅԷ՛Ք

ՓՈՒԹԱՅԷ՛Ք ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղալ պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյրանէ,
Չիկաստանէ, Հերիաստանէ, Ճալիսէ եւ Ճա-
րոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մատչային:

Ա Պ Ա Ռ Ի Կ

6 ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
5000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիզի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բաղմնատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, ևայլն. նաեւ անուններու սկզբնատառով գոհարազարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ շղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա վերարկուներ, բուրդէ և մետաքսէ շրջագգեստի կերպասներ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խասա, ամերիգան, պասմա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաեւ կարի (ձօնս. նովման) ևայլն:

Ունինք նաեւ եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաեւ բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ ևլն.:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաեւ իր ապրանաց տոկոսութիւնը, նրբութիւնը և աժաւ նութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք գիմել ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻՒ 13

50—20